**«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով**
**շրջանակային համաձայնագրերի միջոցով**
**գնում կատարելու ընթացակարգի հնարավոր**
**մասնակիցների ղեկավարներին**

*Հարգելի մասնակից*

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ Արարատի մարզի <<Այնթապի ԲԱ>> ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:

Ելնելով ազգաբնակչության սպասարկման բարելավման պայմաններից և հիվանդների սպասարկումը հարմարավետ և դյուրին դարձնելու պահանջներից, սահմանվում է պարտադիր պայման՝ մատակարար կազմակերպության մատակարարման կետի առկայությունը <<Այնթապի ԲԱ>> ՓԲԸ-ից 10կմ շառավղով հեռավորությամբ:

Սույն հրավերի ծածկագիրն է հանդիսանում ԱՅՆԲԱ-ՇՀԱՊՁԲ-11/4-14:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Արարատի մարզ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23 փողոց, շենք 109, 3-րդ հարկ, 13-րդ սենյակ հասցեով, մինչև 2014 թվականի մայիսի 13-ը, ժամը՝ 10:00: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն Արարատի մարզ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23 փողոց, շենք 109, 3-րդ հարկ, 13-րդ սենյակ հասցեով, 2014 թվականի մայիսի 13-ին, ժամը՝ 10:00:

Գնման առարկա է հանդիսանում <<Այնթապի ԲԱ>> ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերումը:

<<Այնթապի ԲԱ>> ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի (որոնք կազմված են 107 չափաբաժիններից տեխնիկական բնութագրերը, գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացվում է սույն հրավերին կից (Հավելված 3):

Մասնակիցները ներկայացնում են իրենց կողմից հաստատված, համապատասխանաբար մեկ բնօրինակ և երկու պատճեներից կազմված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված 2)։ Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով։

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով։

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը։

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ։

<<Այնթապի ԲԱ>> ՓԲԸ-ի գնումների մասով էլեկտրոնային փոստի հասցեն է՝ specialist_pp@bk.ru։

**Հարգանքով՝**

**Տնօրեն՝** **Ս.Սարգսյան**